

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱ ԿԱՐ ՈՅԻ ԹՂՔԱՅՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԷ Ե ՈՒՂՂՆԻ ԱՌ
Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Բագրի
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Չեռագրիներն եւ չեն դարձուիր,
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԵՊԷՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՐՇՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՂԻՊՏՈՒ

ՊՇ. ՈՂ.Ձ

Փանիրի համար	հարկում	50
» » վիցամետայ	»	30
Շրջակայից »	հարկում	60
» » վիցամետայ	»	35

ԱՐՏՕՆԱՏԵՐ ԶԱՐԲ

Տարեկան	»	Ֆրանկ	18
Վեցամետայ	»	»	10

ՌՈՒՆՈՑ ԵՒ ՊՈՎԱՍՏ ԶԱՐԲ

Տարեկան	»	բուլղի	7
Վեցամետայ	»	»	4

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ՍԵՄԻՍ Ե

ԵՒ ԹՂՔԱՅՈՒԹՅՈՒՆ

Թերին վարչութիւն վրայ է

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Նոր Օր»ի վարչութեան հետեւեալ կարեւոր յայտարարութեան վրայ կը հրաւիրուի Պատ. բաժանորդներուն ուշադրութիւնը:

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-էն ՄԿՍԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅՅՈՒՑՈՒՑԻՉ ՏԻՍԱՐ ՄՄԲԱՏ ՓԱՓԱԶՆԱՆԻ ՄՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՁԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՎԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱԿԻՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

Այս առթիւ Եգիպտոսի և Արտասահմանի արգոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին վճարել իրենց բաժանորդագրիները, նկատելով որ ընկերութեան մը թերթը պահպանելու զլիարար միջոցներէն մէկն է բաժանորդներուն կողմէն գտած գործնական քաջալերանքը:

«Նոր Օր»ի վարչութիւնը կը խնդրէ Արտասահմանի ու կողկասի արգոյ բաժանորդներէն որ հաճին պահանջել երկուողով մը «Նոր Օր»ի պակաս ատացուած թիւերը, որոնք պիտի զրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր» ստացող բոլոր կողկասի հայ թերթերու ու Հանդէսներու Պատ. խմբագիրներէն որ իրենց հրատարակութիւնները փոխանակին «Նոր Օր»ի հետ:

ՍՈՒԼԹԱՆԻՆ
ՔԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ԵՐԼՏԸՉԻ ՔԷՕՇԿՆ
ՈՒ
ԱԶԳԱՅԻՆ ՏՐՏՈՒՆԸ

Սուլթանի թագաւորութեան քսան և չորս տարիներու ընթացքին մէջ անցած դարձածին վրայ ընդհանուր տեսութիւն մը ընելէ առաջ, կարեւոր է յորելեանի խմբագրի մը համար քննել Սուլթանի Համիտի 1876ի բարոյական ու նիւթական կորոզիւ, գասել նորա գործերն, և ի վերջոյ անցնել քննելու Երլտըզի դպրատան ար-

տագրած արդիւնքն մինչև 1900ի յորելեանն:

Սուլթանի Համիտ 1876 թուականին երբ յաջորդեց Սուլթանի Մուրատի, առաջին գործն եղաւ իւր սկզբունքին հակառակ ու գոյութեանը վտանգատար ճանչցող ամեն տարր ու առարկայ հեռացնել իւր մտան, ընդունեց Միտհատ բաշայի կուսակցութեան առաջարկած սահմանադրական օրէնքն, առերես մերժած չը գտնուելու և գուցէ Սուլթանի Ազիզի բազմակից չ'ըլլալու համար, թողով յառաջիկային լուծել իւր վրէժն, ահա տիրումստ մ'էր գա նորահաս: Հեռացուց Սուլթանի Մուրատը և բանտարկեց զանի Զրադանի ծովեղբրեայ պալատին մէջ, սկարայուցած ըլլալու համար հակահամիտեան կուսակցութիւններէն մին, որոց գոյութիւնը սպառնալիք մ'էր գահուն. ահա եղունագործ մ'էր գա. վերջապէս մէկզի թողով ազնի ու հայրենիք, անտարբեր նորա ապահովութեան, սիրեց և պաշտեց իւր անձն, ու շինեց իրեն համար յատուկ վանդակ մը, հոն առանձնանալու համար. ահա՛ ազգատեաց մ'էր գա. հետեւաբար մերժեց Տոլմա-Պաղչէի ծովեղբրեայ ապարանքն որ Մեծիտի օրէն սկսեալ կոչուած էր Սուլթաններու արժանաւայել բնակարանն ըլլալու. հոյակապ պալատ մը վոսփորի ափանց վրայ կառուցուած Պալատի գեղարուեստի ճաշակով, շէք մը որ սպառեց մօտ տասը միլիոն սոկիներ իւր մէջ, ուր թաղուեցաւ Սուլթանի Ազիզի կեանքն: Մերժեց այդ դրախտը, որ այսօր ամայութեան մէջ կը լուի խորհրդաւոր ու ընտրեց իրեն բնակարան Երլտըզի հանրաժանութ քէօշկն, լերան մը զագաթը բլրոյ մը վրայ շինուած, ուրկէ միայն կրնար հսկել Սուլթանը՝ Զրադանի պալատին վրայ, ուր բանտարկուած է իւր եղբայրը, խղճալի Մուրատ 24 տարիներէ ի վեր. ուրկէ միայն կրնար լըրտեսել անսխալ իւր վէզիւրներու և պալատականներու դոնդոններն որոնք յատկապէս փոխադրուած են հոն իւր շրջակայ թաղերն. հոն միայն ապահով նկատուած էր իւր անձը պատրաստելու և պաշտպանելու թըշնամոյն զէմ, հոն ապրելու, իշխելու,

հեղինակելու բովանդակ ժողովրդեան մը շարքն, և այդ շարքերը արգարացնող գործեր. հոն ուր բիւրաւոր գաղտնիքներ թաղուած մտացին ու կը մնան:

Վերջապէս ժողովրդի յաւերուն անտարբեր, վանդակի ինքնապարա գերին, որ վայրկեան մը գահէն չէր կրնար բաժնուիլ, զայն վտանգելու երկուողով, պէտք ունէր լրտեսելու նաև հետուն անցած դարձածն. ուստի հաստատեց լրտեսներու խումբ մը այսօր անխիւ բանակի մը վերածուած, որոնք վայրկեանապէս կը հաղորդեն Սուլթանին իւր գահուն գէմ լարուած դատաւորութիւններն, որոնք ընդհանրապէս կը պտուին թուրք մեծամեծներու և նախարարներու շարքն, նուցա գաղտնիքն իւրեւ համար. սակայն այս անթիւ բանակը սնուցանել պէտք էր. Սուլթանի կառավարութիւնը որ անկարող էր իւր 300000 թուով զօրաց բանակին սնունդ հասցնելու, Սուլթանի անձնական գանձն շատ դիւրութեամբ կըրցաւ սնուցանել իւր լրտեսներու բանակն որ թերևս թուով միւսէն աւելի է:

Սուլթանի գանձն արդեօք ուրկէ հայթայթեց այդ դրամն, շատ դիւրինքնի որ թագաւոր մը կը համարձակի տէրութեան գանձը փոխադրել իւր պալատը, շահագործելով զայն յօգուտ իւր անձնական գանձին. նպատակաւոր որ Սուլթանի Համիտ գեւ գահը չը բարձրացած իւր եֆէնտիտութեան տանէն արդէն ազահի (խընըզ) համբան հանած էր. հետեւաբար իւր ազահութիւնը նպաստեց բազմապատկելու հայ հաշուագէտ նախարարի մը օրնութեամբը որ ըստ օրէ իւր գանձի հարստութիւնն որ այսօր յետուն միլիոն սոկոյ մօտ կը հաշուի:

(Շարունակելի)

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՅԱՏԱՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՍԵՊՏ. 9Ի ՆԻՍՅՆԸ

(Շար. նախորդ թիւի 6 և վերջ)

Տօղգ. Գ. Կիլիսիի տանտնապետութեան հրատարական, Տ. Գեղամ Գրիգորեանի գրպարտութեան և պարտե-

րակամ հրատարակութեան խնդիրները լուսարանուելէ և Ընդհ. ժողովոյ կողմէն միաձայն հաստատութեամբ փակեալ նկատուելէ յետոյ, Տօղգ. ժողովոյ Աստիճակեղ Տիւրք Սիւրաթ Բիւրատ, Ընդհ. ժողովոյ Տիւրք Նախագահին առաջարկութեան վրայ, սկսաւ կարգաւ հաշուեկէտը Ընդհանրան - Ընթերցատուն ընկերութեան Գործ. ժողովոյ միամտայ գործառնութեանց, ինչպէս նաև «Նոր Օր»ի վարչութեան կողմէն պատրաստուած եռամեայ ելմտացոյցը:

Յետ աւարտման ընթերցման, Գործ. ժողովոյ Աստիճակեղ մի առ մի թուելով «Նոր Օր»ի վարչութեան յարգելի ներկայացուցիչ-Քարտուղար Տիւրք Սիւրաթ փափազեանի լի նիւթապէս և լի բարոյապէս մատուցած ծառայութիւնները, որոշումապէս շնորհակալութեան յայտնեց ի դիմաց Գործ. ժողովոյ:

Ընդհ. ժողովը նոյն միջոցին յամակայ շնորհակալութեան քուէ տրուաւ Տիւրք Սիւրաթ փափազեանին:

Այնուհետև Տիւրք Սիւրաթ փափազեան, հակերճ բայց ազգու բանաստեղծութեամբ մը, յայտնելէ յետոյ իր փոխադարձ շնորհակալիքը Ընդհ. ժողովոյ, և ժամանակը գահտնակութիւնը «Նոր Օր»ի խմբագիր Տիւրք Սիւրաթ Բիւրատի, Ընդհանրան-Ընթերցատուն ընկերութեան տեսականութեան պէտքը շնչուց ու համերաշխ գործունէութեան մը բարեկրկնութիւնը յետոյ, առաջարկեց ներկայ Մայր-Գիւրանին, ի պաշտօնէ հրատարակել ի կրկին անդամակցութիւն զՏիւրք Ա. Պալատի, նախորդ Մայր-Գիւրանի Բ. Աստիճակեղ, որ գործիք գործած կարգ մը թերթիկներու, Մայր-Ընկերութեան զատուելով ուրիշ համանուն ընկերութիւն մը կազմել փորձելու սխալը գործած էր, ու այս առաջարկն ըրտ. տոյց տալու համար ներդու նոյն թիւն օգին, որ պէտք է տիրէ ամեն ընկերութեանց մէջ:

Սոյն առաջարկը դրուելով քուէի Ընդհ. ժողովոյ մեծամասնութեան կողմէն ընդունելի նկատուեցաւ, այն պայմանաւ միայն որ եթէ Տիւրք Ա. Պալատի չ'ուզէ նորէն անդամակցել, հրատարակի մէջ յատկապէս իրեն դրուի իրմէ գրաւոր բացատրութիւն մը առ լի ինչ շարժապիւններէ մղուած գատուած է ընկերութեան:

«Նոր Օր»ի խմբագիր Տիար Սըմբատ Բիրատ առաջարկեց լինել ժողովոյ նախագահին որ արածու- թիւն արուի իրեն, ներկայ նստի ա- տենագրութիւնը հրատարակելու «Նոր Օր»ի մէջ: Ընդհ. ժողովը բացարձակ հաւանութեամբ ընդունեց սոյն առա- ջարկը: Այնուհետև որոշուեցաւ միա- մեայ հաշուելիքը քննելու համար հաշուեքննիչ Մասնախումբ մը կար- գել, որ իր պաշտօնն աւարտելէ յե- տոյ իր տեղեկագիրը ներկայէ յա- ուալիկայ Ընդհ. ժողովոյ նիստին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Սեպտ. 23ին:

Արտաշէս Յովսէփէան. — Տիար նախագահ, կ'առաջարկեմ որ բանա- ձեւ մը պատրաստուի մասնաւոր շը- նորհակալեաց, առ Մեծ Տիար Սմբատ փափագեան:

Ընդհ. ժողովն ընդունեց այդ առա- ջարկը, յանձնարարելով առժամեայ Մայր-Դիւանին այդ բանաձեւը պատ- րաստել:

Ընդհ. ժողովը կազմեց հաշուե- քննիչ Մասնախումբը, հետեւեալ Պատ. անդամներէն.

- Տիար Համբարձում կ. Պէրպէրեան Ատենապետ Մայր-Դիւանի.
- Տիար Երուանդ Աւագեան, Ատե- նապետ Մայր-Դիւանի.
- Տիար Առաքել փափագեան
- » Եւսեպ Երզնկեան
- » Արմենակ կոկանեան:

Տիար նախագահը փակեց նիստը ժամը 7 ու կէսին, հրաւիրելով Պատ. ժողովականները յառաջիկայ Սեպտ. 23ի Ընդհ. ժողովոյ նստին:

Աղքատներու Մեծ Տիար Յ. Ենոքե- անը զրկած վարչութեան յոյժ շահեկան և ընդարձակ գրութիւն մը, «Ճշմարտութիւնն Աղքատներու» ազգ. գործերուն վրայ՝ զոր անկողնակալութեամբ կը հրատարակենք այս օրուան թիւին Գ. էջին մէջ, խոստանա- լով շարունակել զայն յաջորդաբար: Արդոյ Պ. յօդուածագրին անվիճելի արժանիքն ու պարկեշտութիւնն երաշխիք մ'են ար- վեն յիշեալ գրութեան վաւերականութեանը. հետեւաբար «Նոր Օր»ի Պատ. ընթերցողնե- րը կը հրաւիրենք ուշի ուշով հետեւի անոր, օգտուելու համար ներկայ հրատարակութե- նէն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հայ Լսարան-Ընթերցատուն ընկե- րութեան Ընդհ. ժողովոյ տարեկան երկրորդ նիստը տեղի պիտի ունենայ վաղը կիրակէ 23 Սեպտ. 1900 ժա- մը 2 ու կէսին կէս օրէ յետոյ, ըն- կերութեան յատուկ շէնքին մէջ յԱպտին, ունենալով հետեւեալ օրա- կարգը:

1. Ընթերցումն նախորդ նստի ար- ձանագրութեան:
 2. Տեղեկագիր հաշուեքննիչ յանձ- նաժողովոյ:
 3. Ընտրութիւն Դիւանի Ընդհ. ժո- ղովոյ:
 4. Ընտրութիւն Գործ. ժողովոյ:
- Դիւանն կը յուսայ թէ բոլոր ըն- կերք պիտի փութան երեւց պարտա- կանութիւնը կատարել, ներկայ ըլ-

լալով Ընդհ. ժողովոյ սոյն կարեւոր նստին:

Ի դիմաց առժամեայ Դիւանի Ընդհ. ժողովոյ Հայ Լսարան-Ընթերցատուն ընկերութեան:

Ատենապետ Ատենապետ Ե. ԱԽԱԿԵԱՆ Հ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Առ ... խմբագիր «Նոր Օր» լրագրոյ. Գահիրէ

Տիար խմբագիր Ձեր անկողնակալութեան կը խնդ- րեմ ներկայ յայտարարութեանս հրա- տարակումը:

Կուգամ հրապարակաւ յայտարար- րել թէ ասկից դրեթէ երկու տարի ա- ուաջ «Նոր Երեւան» թիւթիւն մէջ հրա- տարակում «Մարտիկ ազգ» վէպին Գ. զլուսին մէջ Պ. և Տ. Պաւլաֆեան անունով տեսարան գրուած անձնա- տրութեանց մասին գրուածները բա- ցարձակապէս սխալ ու կեղծ են, տգի- տութեան, անփորձութեան, անգի- տակից կոշտութեան ու գրական «ճա- լա»յի միայն արդիւնք, (*) թէ զա- նոնք գրելէն անմիջապէս ետքը զՂա- ցած եմ, և թէ յանցանքիս մե- ծութեան դիտակցութեան և խղճի խայթիս անհանդուրժելի սասակու- թեանէն զգրուած է որ ինքնաբերաբար, կամաւորապէս և ամենայն անկեղծու- թեամբ կուգամ հոշակել հասարակու- թեան առջև թէ ետ կ'առնեմ այդ տո- ղերը, կը ջնջեմ զանոնք գործէս, չ'եղ- եալ կը համարեմ զանոնք, ու խոնար- հաբար ներում կը խնդրեմ՝ այդ անձ- նատրութիւններէն՝ զորս յետոյ մօտէն ճանչնալու առիթը ունեցած ըլլալով այժմ կը համարեմ Աղքա- տանցիկոյ ամենէն պատուաւոր, ամե- նէն աւելի համակրութեան և յար- գանքի արժանի հազուագիւտ ընտա- նիքներէն մէկը:

Այս գրութիւնը կ'ուղղուի նաև բո- լոր անոնց որոնց այ անձնատրու- թեան անուղղակի կերպով կրնամ զը- պած ըլլալ վէպին մէջ:

Աղէքսանդրեա, 18 Սեպտեմբ. 1900 ՊԱՐՈՅՐ.

(*) Լաւ է անագան քան երբէք: Ծ. Խ.

ԳՈՒՂԱՐՆԵՐ

Կուգայ ժամանակ, երբ անոնք որոնք պար- տաւորութիւններ ունին բայց չեն կատարեր, կ'ենթարկուին ապագայ սերնդի հասարակա- կան դատաստանին:

Առ հասարակ ուսումնասիրութեան պիտի սկսի մարդու մը հասարակական գործունե- ութիւնը, որ կը կամենայ ուն օգուտ բերել զինքը բոլորող ժողովրդին:

Մի տեղեկանք բնաւ թէ բանասիրու- թշնամիները ինչ կը խօսին բու վրայ, ան- գիտանալը զանոնք պատժել է:

Գ. ԱՄԵՐՈՒՆԻ

Մի սահմանափակ շրջանի բարոյական փառերը, որոնք լինում են վարակիչ, չը

պետք է պարզել ամբողջ ժողովրդի առջ: Գ. ԱՂԱՅԵԱՆ

Անաչառութեամբ քննել մի բան, ասել է և ամենայն հանգամանքով ցուցնել ճշմար- տութիւն. իսկ արդէն ճշմարտութիւնը պետք է ըլլայ մեր խուզարկութիւնների առարկան:

Քննադատութիւնը որպէս գիտութիւն է այն կշիռը, որով հարկաւոր է կշռել մար- դերի այս և այն ուղղութիւնը, և հետեւա- բար գնահատել անոնց տուած օգուտը և նոյնպէս փաստը:

Քննադատութիւնը պիտի ըլլայ այն մա- ղուր հայելին, ուր պետք է պատկերացնել ենթակային՝ անոր բարոյական և մտաւորա- կան անձնատրութիւնը իւր բոլոր նրբաթել գծերով ու երակներով. այնպէս որ հրեշ- տակը որ կամէնք հետազօտել զի կեր- պարանքով, չը ներկայանար, և ընդհակա- ոակը դեմ՝ հրեշտակի: Ս. ՇԱՀԱՋԻՉ

Ծածկել վերքերը ազգին պատուը պահել, պաշտպանել չէ՝ օտարին առջև, այլ արհա- մարհել է դեղն ու դարմանը:

ԾԵՐԵՆՑ (ՇԵՇՄԱՆԵԱՆ)

Քննադատութիւնը այն զօրաւոր լծակն է որ հասարակական կեանքի անխել տեղից շարժում և պարտ ու պատշաճ ուղղութիւնն է տալիս նրան: Ս. ՊԱՍՏԱՆԵԱՆ

Տեսնել չարը և ծածկել զայն՝ հարուած- ուելու և հարածուելու երկիւղով, արգարև հոգիի արիւթիւն չի յայտնեմ. մարդ մը որ կարծէ նշմարել անիրաւութիւնը և կը լուէ, արդարութեան դեմ գողութիւն կը գոր- ծէ: Յոսին ծածկելը՝ զայն բուժել չէ, և մատնան՝, ընելը՝ չարը հոշակել չէ: Յոսին ճան չառ է անկէ խոյս տալու համար: Այդ ընթացքը մտքի կարողութիւնը, սկզբ- բունքներու հաստատութիւնը կ'ապացուցա- նէ, ահա՛ այդ է առաքնութիւնը: Չարին անտեղեկ ըլլալը անմեղութիւն է պարզա- պէս, և անմեղութեան մէջ արժանիք չը կայ, քանի որ ո՛չ մըցում կայ հոն, ո՛չ յաղթա- նակի: Ս. ՏԻՍՍԱ

Ազգի մը գրականութիւնը անոր մտաւո- րական, բարոյական, ընտանական ու ընկե- րական կացութեան լաւագոյն հայելին է:

Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Հաւաքեց Ա. ՉԱՐԵՀԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒԻՐԵՐ

ԱնիՇԽԱՆԱԿԱՆԻՔ. — Ումպէրթօ Թագաւորին սպաննումէն ՚ի վեր իբր անիշխանականներ ձերբակալուած ան- ձանց թիւը կը հասնի 2200ի:

Ասոնցմէ զատ, զրեթէ 1000 մարդ, թէ և ոչ-անիշխանական, բանտը նետ- ուած են, միմիայն արքայապանին ջատագովութիւնը կամ ոճրին նկատ- մամբ համակրական ցոյցեր ըրած ըլ- լաննուն համար: Միայն Օգոստ. 1ի մէջ, Անգոնի դատարանը 132 մարդ դա- տեց 144 տարիներու, և 163000 ֆր. տուգանքի դատապարտութիւններ ար- տասանելով:

Ազատական ու ընկերվարական թեր- թիւը խստիւ կը դատափետեն այս

ստուարաթիւ վճիռները, և կ'ամբաս- տանեն խտալական դատաւորութիւնն որ գործիք դարձած է քաղաքական հա- լածանքի մը, կը հաստատեն թէ՛ ձերբակալուածներուն շատերը բնաւ անիշխանական չեն, այլ պարզապէս ընկերվարականներ կամ կղերական- ներ, որոնց քաղաքական գաղափար- ները հաճելի չ'են ներկայ վարչական ձևին:

ՍՈՒՏԱՆԻ ԱՊՐՈՒՍՏԸ. — Խար- թումի մէջ քանի մը նպարներու գի- ները կընդօրինակենք ստորև.

Բրնձի օգգան	6	դր.	ոլջ
Օճառի	8	»	»
Մագարնայի	10	»	»
Պարկ մ'ալիւրը	200	»	»
Արդէպըցորենը	250	»	»

Ու այս արդէն բարձր գիններն ա- ելի բարձրանալու վրայ են:

ԹԱՆԿԱԳԻՆ ԴՈՒՌ ՄԸ. — Ս. Բէթրապուրկի մէջ հիմայ կը կառուց- ուի Ս. Յարութեան նոր Եկեղեցի մը, մէկ դուռը պիտի չինուի համակար- ծաթէ Ը. դարու ուսուական ոճով, Ս. Բէթրապուրկի Աղազէմիային ուսու- ցել Պ. Բարանթէ ոսկերիչին ձեռ- քով. պիտի կշռէ 4100 քիլօկրամ. և պիտի արժէ 50000 ուուրլի. պիտի կոշուի «Դո՛ւն Չարին»:

ԼՈՐՏ ԳՐՕՄԷՐ. — Այս օրերս Սիւվոտիայէն պիտի մեկնի Լոնտրա ու յառաջիկայ շարթու Մարտիկայէ Պրիսանիա շոգենաւով պիտի վերա- դառնայ. Հոկտ. 2ին կամ 3ին կըս- պասուի Բօր-Սայիս:

ԼՈՐՏ ԲՈՊԷՐՉ ՈՒ ԼՈՐՏ ՔԻՉ- ՆԷՐ. — Յառաջիկայ Նոյեմբեր 1ին պիտի նաւ մտնեն Քափէն Անդլիա վերադառնալու համար: Սըր Բէտովըրս Պըւէր պիտի վարէ Հարաւ-Ափրիկէ թողուելիք զօրագնդերուն զլիսաւոր հրամանատարութիւնը:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

ԱՐԿԱՍ. — Տեղացի կին մը անց- եալ շաբաթ օրը Եւրէ Մուհամմէտ Ալիի վրայ, ջախջախուեցաւ հանրա- կաւոր մը տակ, Բանի մը ժամ վերջը մեռաւ:

ԾԵՆՈՒ ՄԱՀ. — Օսման Աճմէտ Առյետա շանուն Պուլազցի արար մը իր արձակած կինն այնքան սաս- տիկ ծեծեւ է որ այս վերջինը քանի մ'օր վերջը մեռած է: Ոճրագործը ձերբակալուած ու դատարանին յանձ- նուած է:

ԽՈՐՀՐԳԱՌՈՐ ՄԱՀ ՄԸ. — Տե- ղային դատարանը քննութիւն մը բա- ցած է հարիւրապետ Մուհամմէտ էֆ. Սայիտի մահուան առթիւ, որ իր կամայիցէն բնակարանին պատու- հանէն վար ինկած է: Չոհին կինը ձերբակալուած է: Հարցաքննութիւ- նը կը շարունակէ:

ԱՀՌԵԼԻ ԱՐԿԱՍ. — 100ի չափ ճամբորդներ պարունակող խտիվական Եւրոպից շոգենաւն ընկղմեցաւ, ման- րամասնութիւնը յաջորդ թիւով:

ՃԵՍԱՐՏՈՒԹԻՒՆՆ
ԱՂԵՔՍԱՆԻՐԻՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵ-
ՐՈՒՆ ՎՐԱՑ

Ա.

Վանայի «Շարժում» լրագրին 19 Ապրիլի թուոյն մէջ հրատարակուած Աղեքսանդրիայէն «Ռ. Վ.» ստորագրութեամբ թղթակցութիւն մը առիթ տուեր է Տ. Լ. Մկրտիչեանի իւր «պարտականութիւնը» կատարելու նոյն քաղաքի «Իրաւունք» լրագրին 14, 21, 24 և 28 Յունիսի և 1 Յուլիսի թիւերը զարգարելով՝ քառասուն թերթօնի սինակները գրաւող մանրագրութեամբ մը, անով «գոնէ՛ ուղղելու համար համազումը արտա- «ուհմանեան ուրիշ երկիրներու Հայերուն, «որոնք վերոյիշեալ թղթակցութիւնը կար- «դացած ատենին, չե՛ս կրցած անշուշտ «երևակայել թէ ա՛յնքան գեղեցիկ յարգար- «ուած նորակէլ մը կը ճաշակեն»:

Տ. Լ. Մկրտիչեան, որ Աղեքսանդրիոյ թաղական խորհրդոյ քարտուղարն է, կը յայտարարէ թէ նոյն պարտականութիւնը կատարած է եղեր, ուրիշ անգամներ ալ «Իրաւունք»-ի էջերուն մէջ, «Շարժում»-ի Աղեքսանդրիոյ թղթակցութեան ուղղամտութեան կշիռը մատնանիշ ընելով և անոնց ինքզինութեամբ երևան հանելով բուն իրողութիւնները ընթերցողին առջև պարզելու համար:

Տ. Լ. Մկրտիչեան բարեկիրթ, նուազ կրթու և աւելի ուղղամիտ գործներու կարգին պատկանիլը ծանուցանելով, կը խոստանայ «Վայելուչ բացատրութիւններով «պատմել իրողութիւնները, և իրենց իսկա- «կան գոյներով, առանց — սակայն — կար- «միելու իւր ստորագրութեան տակ բացատ- «րուած ունէ՛ր գեղեցիկ համար, որու ամբողջ «պատասխանատուութիւնը սիրայօժար կ'ըստանան»:

Կեղծիքի գե՛մ ճշմարտութեան այս հօգը և անողոք անոյնները և այս հմուտ պաշտօնական պատմագիրը, վերոյիշեալ գովելի տրամագրութիւններով և երաշխարարութիւններով գերազանցապէս զօրացեալ՝ իւր երկարաձիգ աշխատասիրութեան կը ձեռնարկէ, «մանրակրկիտ քննութեան ենթարկե- «լով Ա. Աղեքսանդրիոյ շարժումը և իրենց «կերպարան շուրջը տեղի ունեցած գեղեցի- «քը, և Բ. Տեղական ազգային գործերու «ընդհանուր վիճակը»:

Այսպիսի յանկուցիչ յառաջարկով մը պատկուած գրութիւն մը աններելի պիտի ըլլար ծայրէ ի ծայր չ'կարգալ, մանաւանդ Աղեքսանդրիոյ Հայ հասարակութեան վերաբերող ուրիշ անձի մը համար, որ տեղա- յին ազգային իրաց արդէն բնականաբար հետաքրքիր, կը տեսնէր անոր տակ ստորագրուած անունն որ Աղեքսանդրիոյ թաղական խորհրդոյ մը քարտուղարի պաշա- նական բարձր հանգամանքին կը միացունէ ասոր անվիճելի հեղինակութեան երաշխարարութիւնն ալ ի մասին ազգային գործոց:

Բայց, զօրազարբար Աղեքսանդրիացոց համար, «անորակելի, զորոքելի թղթակցի» մը նամակին առթիւ շարադրուած այսպիսի հեղինակաւոր և տեսակին մէջ նշանաւոր ուսումնասիրութիւն մը այնպիսի միջոցաւ մը (անշուշտ նպատակաւոր) հրատարակութեան տրուած է Տ. Լ. Մկրտիչեանի կողմէ, որուն անվրիպելի հետևանքն էր անոր՝ Եգիպտոսեան ազգայնոց մէկ խիստ սակաւթիւ մասին միայն մատչելի ըլլալը, և այս ալ՝ մանաւանդապէս իւր շրջանակին վերաբերող անձանց:

Նիւթը՝ Աղեքսանդրիոյ ազգային ներքին գործոց շրջանակին մէջ տեղի ունեցած իրողութեանց պատմութիւնն ըլլալով, ասոր ինչ աստիճան ճշմարիտ ըլլալուն գնահատութիւնն «արտասահմանեան ուրիշ երկիրներու Հայերուն գործը չէր կրնար ըլլալ բնականաբար, քանի որ ասոնք ա՛յ միայն յետին մանրամասնութեամբ պատմուած այս իրաց վրայ բացարձակապէս անտեղեակ են, այլ նաև հետազոտութեանց անպատասխանութիւններով մեծցած դժուարութիւններով պաշարուած՝ ուրիշ միջոց մ'ալ չունին զայն ստուգելու, նոյն իսկ եթէ բաւական հետաքրքրութիւն ունենային:

Ինչ կարելի չէ մտածել այն մեծապէս հաւանական բանը թէ՛ «Իրաւունք»-ի ընթերցողաց մեծամասնութիւնը նոյն լրագրի բարեկիրթ և ուղղամիտ թղթակցին և անոր գործակալին, և միանգամայն, չմոռնալ յաւելուլ, աշխարհածանօթ կուսակցապետի մը ստորագրութեան պարտ ու պատշաճ պատիւն ընծայելով՝ պիտի բաւականանար հիմնուել նոյն ինքն պատմագրին կողմէ տրուած բացարձակ ապահովութեանց վրայ և անկեղծօրէն հաւատալ թէ Աղեքսանդրիոյ թաղական խորհրդոյ քարտուղարը, նոյն քաղաքի ազգային ներքին խնդրոց նկատմամբ յերկրուած «խեղաթիւրումները երևան հանելու և բուն իրողութիւնը ընթերցողին «առջև անտեղեակ պարզելու պարտականու- «թիւնը զգալով միայն զրիչը ձեռք առած «է, պատմելու համար իրողութիւնները ի- «րենց իսկական գոյներովը»:

Ապահով եմ թէ «Իրաւունք»-ի ընթերցողաց լսելի և անկողմնակալ մասին համար, ինչպէս ընդհանուր Աղեքսանդրիացոց համար, շատ աւելի փափաքելի պիտի ըլլար որ փոխանակ յօդուածագրին կողմէ միայն և ուղղակի գալու այսպիսի վկայութիւններ — որոնց հակառակն ոչ ոք կ'երևակայր լսել իւր բերնէն — համատեղութեան և անկեղծութեան ցոյց մ'ըլլալու համար գէթ, Աղեքսանդրիոյ մէջ միայն գտնուող իրազեկ և հետևապէս միանգամայն արժանահաւատ անձանց մեծամասնութեան վերապահուելը յօդուածագրին աստիճանց նկատմամբ միակ վաւերական վիճիւր:

Բայց Տ. Լ. Մկրտիչեան պատրուակելով թէ «Աղեքսանդրիացիները արպարե- «լուսաբանուելու պէտք չունին», «գոնէ «արտասահմանեան ուրիշ երկիրներու Հայ- «երուն համազումը ուղղելու» նպատակին վրայ միայն կեցողնացուցած է իւր բոլոր սյծերը և այսպէ՛ս՝ իւր ուշադրութիւնէն վրիպեցուցած՝ ապացոյցներու պէտքը, իւր բոլոր կողմամբութեամբը հաւատալով որ ինչ որ ինքը կ'ըսէ թէ ճշմարիտ է՝ անպայման կերպով ճշմարիտ է, և իւր ուզածէն ու ըսածէն տարբեր կամ դուրս ինչ որ ըսուած է և ըսուի՝ «կեղծիքի կաղապարին մէջ «թափուած ճշմարտութիւն է» (*): «Գեղեցիկ «յարգարուած նորակէլ» է, և վերջապէս և միով բանի «խեղաթիւրում» է:

Ընթերցողը պիտի հաճի դատել թէ այս խօսքերը իմ կողմէ հնարուած և ըստ հա-

(*): Իր ցաւիմ որ Տ. Լ. Մկրտիչեանի այս խօսքերուն մէջ ամփոփուած խորհիմն իմաստը բնաւ չ'հասկցայ զօրազարբար- րայց ո՞վ իրմէ աւելի մերողամիտ կրնայ ըլլալ իմ հասկացողութեան տկարու- թեամբ: Բարեբաղդաբար, իր գրութեան ամբողջ երկայնութիւնը գրաւող ալիքն ուղղութեան առաջնորդութեամբ կը համարձակուի կարծեմ և նմաւորել թէ Տ. Լ. Մկրտիչեան ըսել կուզէ թէ իւր ալիքը կած ստույգութեամբը ճշմարտութիւնը չ'են մերկայացմեր:

ճոյ Տ. Լ. Մկրտիչեանին վերագրուած կարծիքներ չ'են, այլ նոյն իսկ իւր ստորագրութեան տակ հրատարակու տեղի ունեցած յայտարարութիւններ:

Տ. Լ. Մկրտիչեանի խոստովանութեամբ կը հաստատուի նաև թէ իւր գլխաւոր նպատակն եղած է այս առթիւ ալ իւր հարուածոց պատուհասին ենթարկել «Շարժում»-ի հրատարակութիւնները «Իրաւունք»-ի միջոցաւ:

Բարձր քաղաքականութեան գաղտնեաց թափանցելու կարողութիւնը չունեցող պարզ մահկանացուց համար բուրոյթին խորհրդաւոր բան մը կայ այս ուղղութեան մէջ, այն է «Իրաւունք»-ի և «Շարժում»-ի միջև Տ. Լ. Մկրտիչեանի ի պարտականութեան կատարած դերը, զոր Աղեքսանդրիոյ թաղական խորհրդոյ քարտուղարին բնութեամբ գաղտնի բայց իւր խոստովանութեամբը աշխարհածանօթ ուրիշ շատ աւելի բարձր և ազգեցիկ մէկ պաշտօնին սխալ հասկեցուած պահանջմանը պէտք է անշուշտ վերագրել:

Յաւալին այն է սակայն որ Տ. Լ. Մկրտիչեանի այս հասկացողութիւնը կը մղէ զինքը իւր երկու դիրքերէն միոյն ազգեցութիւնը միայն, և փոխադարձաբար, ծառայութեանը տակ դիմել շատ առիթներու մէջ, և հետևաբար տեղական ազգային շահերը շիտթել մասնաւոր և ուրիշ կարգի շահերուն հետ «յեղափոխական կուսակցու- «թեան» մը՝ որուն մէջ սերտ կապակցու- «թիւններ ունեցող անձանց (որոնց մի քա- «նիները յակասէ անուանէ կը նշանակէ) գլուխը և առաջնորդը կը գտնուի ինքն Աղեքսանդրիոյ թաղական խորհրդոյ քարտուղարը, ինչպէս իւր ուսումնասիրութեան առաջին և վերջին մասերուն մէջ յայտնապէս յիշատակած է:

Կարծեմ թէ ամեն կողմանց համար ալ հաւատարապէս փաստակար գրութիւն մ'է այս, եթէ լուրջ և անկեղծ օգտով նկատողութեան անուրին ամեն բանէ առաջ ազգային թէ՛ տեղական և թէ՛ ընդհանուր շահուց ճշմարիտ պահանջները:

Եթէ բարեկամ մը զիպուածով տեսած չ'ըլլար «Իրաւունք»-ի վերոյիշեալ թիւերը և անոնց մէջ կարգացած, արդար գայրոյթով մը, այն խիստ վերաւորիչ և անարգա- կան բացատրութիւնները որովք, պաշտելի բարեկիրթութեամբ մը, Տ. Լ. Մկրտիչեան, անպարզ յիշած է իմ անունս, այս վայրկեան չ'պիտի ունենայի անոնց պարունա- կութեանը վրայ ուրիշ գաղափար մը:

Որչափ շարժակալ եմ յիշեալ բարեկա- մին իւր ազնիւ ծառայութեանը համար, ա՛յնչափ իրաւունք ունիմ կարծեմ, գանգա- տելու Տ. Լ. Մկրտիչեանէն (որ մանաւանդ իբրև գործակալ «Իրաւունք»-ի, շատ լաւ գիտէ թէ այս լրագիրը ո՞րքան քիչ տարածուած է հոս), որ իւր սովորական ազնուութեան և ուղղամտութեանը հակառակ վարուելով՝ չէ ուզած իւր աշխատասիրութիւնը Եգիպտոսահայոց հանրութեան մատչելի միակ ազգային թերթերուն, «Արշալոյս»-ի կամ «Նոր Օր»-ի մէջ հրատարակել, կամ գէթ ինչ և այլ պատկանեալ անձանց ուղղակի տալ վեհանձնաբար թէ՛ ասոնց և թէ՛ մա- նաւանդ ինչ նկատմամբ ամեն երևակայելի անարգանքներով լի իւր ա՛յնքան նուրբ ճաշակու և ա՛յնքան ճշմարտախօս և ընտիր ոճով յղացած հեղինակաւոր ուսումնասիրու- թիւնը, որպէսզի գոնէ՛ ապահովաբար կա- ընայինք տեղեակ ըլլալ անոր:

Իմ մասին սակայն, Տ. Լ. Մկրտիչեանի համար այս շատ թիթիւ գանցաուրութիւնը կը ներքեմ հիմալ իրեն, քանի որ վերջապէս իւր զուխործոցը աչքի առջև ունենալու

բազմէն զուրկ չ'մնալով՝ կարող եմ պարտա- կանութիւն մ'ալ ես կատարել, մի քանի խօսք արտասանելով Աղեքսանդրիոյ թաղական խորհրդան ընկերութեան և տեղական ազգային գործոց վերաբերեալ իրաց վրայ, որք միայն կրնան իրաւամբ հետաքրքրել հանրային ուշադրութիւնը:

Հետևապէս, Տ. Լ. Մկրտիչեանի ինչ նուիրած ուրիշ անձնական նախապիտանքները — որքա՛ն ալ խիստ անպատկառ և թունա- լից բացատրութիւններու հեղեղներով կը յորդին իւր ընցուցած անվերջանալի էջերէն — ուղղակի պատասխան չ'պիտի ընդունին այս գրութեան մէջ:

Անձնական խնդիրներն ոչ միայն բացար- ձակապէս անպատշաճ և փաստակար կը գըս- նեմ խանել հանրային խնդիրներու մէջ, այլ սկզբամբ և բնագիտակալ կ'արգիլեմ ինչ՝ մեծ կարևորութիւն մը տալ անձերու գէ՛մ ուղղուած յարձակմանց և նոյն իսկ նախաանաջ, առանց նախապէս նկատու- զութեան առնելու և կշիռելու թէ ինչպիսի անձերու կողմէ կուզան անոնք:

Չիս ճանչցող պատուայ և պատուութեան տէր բարեբաղդաբար բազմաթիւ անձանց գնահատութիւնն և համարումն ինչ բաւա- կան են:

Կը խոստովանիմ թէ՛ հակառակ իմ քիչ շատ անձնական փորձառութեանս և շատե- ռու կողմէ արուած վկայութեանց, միամտու- թիւնն ունեցայ վայրկեան մը յուսալու որ Տ. Լ. Մկրտիչեան, իւր յառաջարկին մէջ քարոզած սկզբունքներուն հաւատարիմ մնալու համար գէթ, պիտի գտնուի իւր մէջ բաւական ուղղամտութիւն և կամքի ոյժ յար- գելու համար իւր գրութեանը մէջ այն ոգին և ոճը զորս շտեմնելով «Շարժում»-ի թղթ- թակցին նամակին մէջ՝ իւր անողորմ գա- տապարտութեանց և նախատանաջ շանթի- թերթի կը պատուհանէ զայն:

Տ. Լ. Մկրտիչեանի տրամաբանութիւնը հիմնալի է, և արդարև անկարելի է զար- մանալ իւր գրելու այս եղանակին, երբ նը- կատողութեան անուրի թէ կարմիրու անրն- գունակ անձ մ'ըլլալն անփոփոխ իրողու- թիւն մ'է, եթէ պէտք է հաւատար ընծայել իւր իսկ յայտարարութեան, զոր նախապայք և թանկագին անկեղծութեամբ մը՝ իւր ձե- ոց կ'արձանագրէ իւր գրութեան ճակատը:

Պատ. ընթերցողաց ներողամտութիւնը կը խնդրեմ, գրութեան երկարութեանը հա- մար, զոր պիտի ջանամ սակախ ըստ կա- ընելոյն չափաւորել հակառակ աչքին առջև գտնուող յօդուածին բնութեանցութեան և անոր մէջ բացատրութիւն պահանջող խն- դրոց տարապայման բա՛նութեան:

Ներուի ինչ նաև եթէ շատ յանախ, թէ- պէտ սկամայ, կը յիշեմ յօդուածագրին ա- նունը, անկարելի ըլլալով ուրիշ կերպով ակնարկել իր գրութեան ամեն մէկ կէտին, և խնդրոյ նիւթ ելած այն անհամար գեղե- ցերուն որոց մէջ տառնակարգ գեր մը խա- դացած է Տ. Լ. Մկրտիչեան:

«Շարժում»-ի թղթակցին նամակին առ- թիւ գրուած յօդուածի մը պատասխանելու առաջին և մեծագոյն իրաւունքը և պար- տականութեանը բնականապէս իրեն՝ «Ռ. Վ.»-ին, վերաբերելով, կարող էի, իմ մասին արհամարհական լուրերուն մը միայն պահել, եթէ լսէի շատ մը յարգելի անձանց յոր- գործերուն: Բայց յիշեալ յօդուածը ուշադ- րութեամբ կարդալով, անկարելի եղաւ ինչ ստուգել որոշել թէ անոր բուն շարժաթիւր՝ ընկերութեան վրայ գրելու պատրուակաւ գիտ և բարեկամներու անաւարկելու ճի՞գ մը եղած է, թէ այս սին ճիգին գոհացում տալու համար ընտրուած միջոցներն իբրև փաստ գործածելով՝ ընկերութեան շուրջը տեղի ունեցած գեղեցիկ մէջ իւր և իւր պաշտպանութեանը տարակալ եղած անձանց վարմունքները արդարացնելու յանգուցն փորձ մը, իրողութիւններն ըստ հաճոյս նկարա- գրելով:

(Շարունակելի)



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ԺԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին ՆՈՐ ՕՐ, փիլիսոփայական, հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւորամաներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազուրկներ, սյահարաններ, հաշուեցուցակներ եւն.:

Յանձնարարութիւնները կը կատարուին փութով, ամենայն խնամով եւ ճաշակատէր սպասարարութեամբ:

ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ

Ապիւն Պապ-Էլ-Պոսթան Հրատարակիչ Վրայ եւ Նուագածուաց խմբի Զօրանցի գիւմարցի ՕՀԱՆԷՍ ՄԻՄՈՆԵԱՆ ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հատիկ Զօրանցի է Գահիրէի մէջ, ուր կենցաղատէր-մը կարենայ անցընել հաճոյսի ժամանոց մը: Ապառիտ ընդարձակ հրատարակիչ զօրանցի ուր, վայրին սրանցի զիջքը, և սպասներուն մաքրութիւնը, ըմպելեաց անարատութիւնը, այս ամեն սուսուրութիւններով ԵՓՐԱՏ ԶԻՓՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի խումբ, որոնք ամեն իրիկան, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վայելեն երջանիկ ընկերութիւն մը: Ամեն կարգի զովարար, թարմ ու անխառն ըմպելիներէ զատ մանաւար խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներէ օգտուելու ամենէն գրեթէ անարհատներն անգամ պիտի գոհ մնան Եփրատէն:

ՃԱՄԱՑՈՅՑ ՄԸ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԿԱԶԱՆՃԵԱՆ
Շատ Ապու-Սապան
Նիւու-Տնիվեռայի իրեղարանին գիւմարցի:
Օգտաւն ու զուարճալի գիրք մաքուր ու վայելչաւ տպաս համեղ ու անդարար կերակորներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւնն. ճոխ ճաշայուցակ մը գիրք մատչելի գիններով անձ Գազանճեան եղբարց ճաշարանը:
Ով որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

ՓԻՆԻՍԻՎԻ ՎԵՐԵՐԵՒՈՒՄԸ

Կու գանք յայտարարել թէ՛ Եղիպտոսի և թէ՛ արտասահմանի մեր Պատ. բաժանորդներուն, ինչպէս նաև բոլոր ընթերցատէր տղայիներուն թէ՛ «Փիլիսոփայ» կրթամանայ հանդէսը որ Մտտիկեան տպարանին փակման հետեւանքով դադարման գոտուարտուած էր անցեալ տարի Նոյ. 15-ին ի վեր, պիտի վերականգնուի հրատարակուի Տիրոջ Թորգոմ Փափազեանի «Միութիւն» նորակազմ ճաշարանին մէջ: «Փիլիսոփայ» ի Բ. տարեշրջանը պիտի ընկաի ներկայ Սեպտեմբերի 30-ին, ամսաթերթի վերածուած, նոյն գիրքով, 24 էջերէ բաղկացած և պարունակութիւնը ճոխացած. ըյս պիտի տեսնէ ամեն ամսոյ վերջը:
Այս առթիւ կը խնդրուի «Փիլիսոփայ» ի Ա. տարեշրջանին ամբողջ տարեկան բաժնեգինը վճարող մեր Պատ. բաժանորդներէն, որ հաճին, ի փոխարէն «Փիլիսոփայ» ի պակաս մնացած թիւերուն, խմբագրութեանս կողմէն ընդունիլ «Կարմիր Վարդան» արձակ ու ընդարձակ թատերգութիւնը, 5 արարէ բաղկացած, որ ի մտոյ ըյս պիտի տեսնէ Միութիւն տպարանէն, ազնիւ թղթի վրայ մաքուր տպագրութեամբ:
Իսկ այն բաժանորդներն — ու դրժբադարար մեծ է անոնց թիւը —, որոնք «Փիլիսոփայ» ի Ա. տարեշրջանի 14 թիւերն ստացած են ու մինչև ցարդ փող մը չեն վճարած, պիտի փութան անտարակոյս զրկել իւրաքանչիւրն իր պարտքը, «Փիլիսոփայ» ի հասցէին, որպէսզի մենք ակ համարձակները իրենց հասցէին զրկել սխալ Բ. տարեշրջանի թիւերը:
ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ
Եզրուոտի համար տարեկան զը. ողջ 35
» » վեցամս. » » 20
Արտասահմանի համար տարեկան ֆր. 40
» » վեցամս. » » 6
Կովկասի համար տարեկան ար. ըլի 4
» » վեցամսայ » » 2
Տնօրէն-Խմբագիր Ս. ԲԻՆՐԱՏ

ԿՈՒԶԷՔ ՈՒՆԵՆԱԼ

ՈՍԿԻ
ԿՈՒԶԷՆ ԼԱՐՈՒՈՂ ԽԵՍ ՍԵՐՈՒՆ ԵՒ ԲՆՏԻՐ
ՃԱՄԱՑՈՅՑ ՄԸ
ՄԻՄՈՆԵԱՆ 120 ՂՐԾ. ՎՃԱՐԵԼՈՎ
ԴԻՄԵՑԷՔ
ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆ
ԳԱՀԻՐԷ, ՄՈՒՍԲԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներ ու ամենազարամատչելի գներէն սկսելով մինչև ազամանդազարգ: Արժաթ ժամացոյցներ 30 զրուչէն սկսեալ: Նիքէլ արծնութուած ժամացոյցներ 22 զրուչէն սկսեալ: Նաև ոսկի, արժաթ ոսկեպատ շղթաներ և գոհարեղէններ. ինչպէս նաև պատի և գոնոսի բազմազան բանտիւներ:
Ամերիկեան Նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 զրուչի անհաւատալի գնոյ փոխարէն, որոնք ըստ կը բանին:
Ուրեմն գիմեցէ՛ք ուղակի
ՍԵԼՎԱՋԵԱՆ ՎԱՋԱՌԱՏՈՒՆԸ

ՊԵԼԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.
ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱՎԵՐ
ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻՆԱՆՑ
ԵՒ ՉԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ
Ապիւնի մեծ պողոտային վրայ Տայիրայի Սանիթի գիմարցի, ճախիկին իրեղարան գործիներու վաճառատները:
Տպաս. «Միութիւն» — Թ. Ս. Փափազեանի

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենր այդոյ հատարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմոյ Պատ. յաճախորդները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագնութեան կողմէն:
Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեռագիրութեան դասեր ամերիկեան ամենալիւրջին կատարելագործուած մէթոտով:
Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեղին:

ԱՏԱՆԱՐՈՅԹ
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ ար լա Պուրսի Վից, Բ. յարկ, թիւ 9 գասիկոնը:
Կը բժշկէ բերնի և ակուպի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազբատանքի ձրի կը գործանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8-էն 9:

ՉՈՒԼԻԶ-ՄԵՔԵՆԱԳՈՐԾ
ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԲ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԲԵՆԵԱՆԻ ՆԱԿԻՆԵ ՏՊԱՐԱՆԸ
—X—
Կը ձուլեն, կը շինեն Երկաթէ ու արդյէ զանազան գործիներ ոսկերչութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, ևն., յաճախորդները գոհացնող պայմաններով:
Le Gérant J. MUNIER